Կարծիք

Բարսեղյան Սամվել Մարտիրոսի «Սոցիալ-իրավական պետության սահմանադրական մոդելի կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Հրապարակային պաշտպանության ներկայացրած ատենախոսությունը նվիրված է սահմանադրական իրավունքի տեսության և պրակտիկայի և, ընդհանրապես իրավագիտության առավել խնդրահարույց ու բարդ հարցերից մեկի՝ սոցիալ-իրավական պետության կայացման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունն, առաջին հերթին, պայմանավորված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական և դատահիրավական բարոփոխումների հետ կապված տեսական ու գործնական բխնդիրներին համարժեք ու արդյունավետ լուծումներ գտնելու պահանջներով:
Խոսքն, ըստ էության վերաբերում է ազգային պետականության և հասարակության սահմանադրականացմանը, այսինքն՝ Սահմանադրությունում ամրագրված սոցիալ-իրավական պետության կայացման խնդիրների իրականացմանը: Առանց այդ խնդրի լուծմանը անհնար է շոշափելի հաջողություններ ձեռք բերել երկրի սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում:

Բացի դրանից, առանց սահմանադրականության հաստատմանը՝ ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածը կդառնա «թղթային» արտահայտություն և կվերածվի պատրանքի:

Հեղինակի նման սկզբունքային մոտեցումը կանխորոշել է ատենախոսության բովանդակության պահանջվող խորությունը և հնարավորություն է ընձեռել հեղինակն հանգելու տեսական ու գործնական նշանակություն ունեցող արժեքավոր եզրահանգումների ու հետևությունների:

Ատենախոսության մեջ հանգամանորեն քննարկվել են իրավական և սոցիալական պետության էության ու առանձնահատկությունների հիմնահարցերը:

Այս առումով, հեղինակն իրավացիորեն գտնում է, որ իրավական և սոցիալական պետության միաժամանակյա գոյության փաստը, վկայում է սոցիալ-իրավական պետության փաստացի իրողությունը, քանզի պետությունը կարող է դիտարկվել իրավական, բայց ոչ սոցիալական (օրինակ՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և այլք) և հակառակը՝ լինի իր էությամբ սոցիալական, բայց ոչ իրավական (օրինակ Խորհրդային Միությունը, Չինաստանը և այլք):

Այստեղից կարելի է եզրակացնել, որ ատենախոսական աշխատանքը նաև խիստ գործնական-կիրառական նշանակություն ունի:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը նրանում է, որ հեղինակը սահմնադարական բարեփոխումների համատեքստում համալիր ու համակարգված հետազոտություն է իրականացրել սոցիալ-իրավական պետության էության և բովանդակության բացահայտման ողղությամբ, կանխորոշել է դրա կայացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում:

Գիտական նորույթի տարրեր է պարունակում նաև պաշտպանության նարկայացրած հիմնական դրույթներում:

Ատենախոսության եզրափակիչ մասում հեղինակը ամփոփում է իր կողմից կատարած հետազոտությունների արդյունքները և հանգել է մի շարք արժեքավոր տեսական ու գործնական եզրակացությունների:

Ընդհանուր առմամբ հաջողված ու գիտականորեն հիմնավորված աշխատանքի վերաբերյալ ունենք հետևյալ նկատառումները.

Առաջին, ատենախոսության բովանդակության առումով, ցանկալի կլիներ ինչ-որ չափով աւսումնասիրության առարկա դարձներ նաև ԱՊՀ երկրների սահմանադրական փորձը, քանի որ հետխորհրդային երկրների առջև ծառացած խնդիրները սոցիալ-իրավական պետության կայացման գործում, ըստ էության, չնչին տարբերություններով հանդերձ, նույնն են: Այդպիսի վերլուծության արդյունքները միայն կխորացնեին աշխատանքի բովանդակությունը, այլև կնպաստեին ավելի հիմնավոր և ընդգրկուն եզրակացությունների ձևակերպմանը:

Երկրորդ, հեղինակը խոսելով սոցիալական և իրավական պետության կայացման հիմնախնդիրների մասին, մեր կարծիքով, անհրաժեշտ է նաև կանգ առնել այն օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտների վրա, որոնք իրապես խանգարում

են դրանց կայացմանը, քանի որ հետազոտության այս տեսանկյունը ավելի կբարձրացներ աշխատանքի կիրառական ուղղվածությունը և ինչ-որ չափով կնպաստեր մոզանում սոցիալ-իրավական պետության կայացման գործին:

Սակայն նշված նկատառումները կրում են սոսկ ցանկության բնույթ և դրանք որևէ կերպ չեն կարող նսեմացնել կատարված աշխատանքի դրական արժանիքները:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ ԲՈԿ-ի կողմից հրատարակված գիտական հրատարակությունների համար ընդունելի տարբերակներում հեղինակի հրատարակած հոդվածները բավարար չափով արտացոլում են աշխատանքի էական դրույթները:

Սեղմագիրը և ատենախոսությունը համապատասխանում են ԿԿ կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հետագա փոփոխություններով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Սամվել Մարտիրոսի Բարսեղյանի «Սոցիալ-իրավական պետության սահմանադրական մոդելի կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02. «Հանրային իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական ու ավարտուն հետազոտություն է, իսկ նրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Իրավաբանական գիտությունների
դոկտոր՝ **Ն.Գ.Սուքիասյան**

Ն.Գ. Սուքիասյանի ստորագրությունը հաստատում եմ՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտքարտուղար՝